

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց,
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14:

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ

ՄԱՇՏՈՑԻ

ԱՐՁԱԳԱՆԳ

www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ



ԻԶ տարի (26-ամեակ)
2019-ի Տարեկան Բացառիկ

Հաւատք

| Կրօն

| Եկեղեցի

| Լեզու

| Մշակոյթ


Բովանդակություն

Խօսք՝ Առաջնորդ Սրբազան Հօր	Էջ 3
Խօսք՝ Հովիւի եւ Հոգաբարձութեան	Էջ 4
Նկարներ՝ Կիրակնօրեայի 2018-19 տարեշրջանէն	Էջ 5-13
Մեր Խօսքը	Էջ 14
www.sourphagop.org	Էջ 15
Հակիրճ Տեղեկութիւններ 2018-19 Տարեշրջանի Մասին	Էջ 16-17
Ձեռնարկներ եւ Արտադասարանային Աշխատանքներ՝ Ժամանակագրական Շարքով	Էջ 18
Աշակերտական Ներկայութեան Տախտակներ	Էջ 19
2018-19 Տարեշրջանի Կազմը	Էջ 20

ՎԵՐԱՄՈՒՏ

15 Սեպտ. 2019

Ժամը 10:30



ԳԱՆԱՏԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ARMENIAN PRELACY OF CANADA
PRÉLATURE ARMÉNIENNE DU CANADA

ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔ

Սրտի անհուն ուրախությամբ կ'ոչունեմ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցի Տեսուչը, ուսուցիչները, աշակերտներն ու ծնողները:

Փառք եւ գոհութիւն կը յայտնենք, որ կրթական տարի մը եւս բոլորեցիք: Կիրակնօրեայ Դպրոցի աշխատանքները բարութ իրենց աւարտին հասան այս տարի եւս: Աշխատանք մը, ինչպէս անցեալին այսօր եւս նոյն թափով, ճիգով եւ անմնացորդ ու նուիրեալ ուսուցիչներով իրականացաւ:

Դաստիարակութիւնը կը սկսի մանուկի մը ծննդեան առաջին օրէն՝ օրօրօցէն: Նոյնպէս քրիստոնէական դաստիարակութիւնը կը սկսի տունէն: Հայ մանուկը հոգեւոր ու բարոյական առողջ կազմաւորում կրնայ ստանալ առաջին հերթին հայ ընտանիքին մէջ: Եւ հետեւաբար, մեր ընտանիքները աւելի լուրջ կարեւորութիւն պէտք է ընծայեն քրիստոնէական դաստիարակութեան: Մեր զաւակները պէտք է վստահինք Կիրակնօրեայ Վարժարանին, զիրենք աւելի մօտեցնելու Աստուծոյ, մեր հոգեւոր ապրումներուն եւ արժէքներուն ու մանաւանդ մեր եկեղեցույ դարաւոր ասանդութիւն-ներուն:

Յիսուսի խօսքը լսենք. «Թոյլ տուէք որ մանուկները ինծի գան»: Հեռու չպահենք զիրենք Աստուծոյ խօսքէն եւ անտարանական ճշմարտութենէն, որպէսզի իրենց մեծութեան մէջ իսկ մասն մանուկ՝ ապրումով եւ հոգեբանութեամբ:

Հետեւաբար, Կիրակնօրեայ Դպրոցը ամէնօրեայ ընթացք է Կիրակնօրեայ ապրումով:

Այս առիթով մեր գնահատանքը կը յայտնենք մեր ուսուցիչներուն իրենց ծառայութեան եւ մանաւանդ նուիրումին՝ սերունդներ դաստիարակելու, քրիստոնէա-կան ճշմարտութեամբ զինելու եւ կրօնական գիտելիքներով հարստացնելու զանոնք:

Միաժամանակ մեծապէս կը գնահատենք մեր ծնողներու գոհողութիւնը, որ զիտակցօրէն կը վստահին իրենց զաւակները Կիրակնօրեայ Դպրոցին՝ հաւատալով անոր սրբազան առաքելութեան:

Եկէ՛ք, մնասնաբար հետամուտ ըլլանք մեր զաւակակներու առողջ դաստիարակութեան, որպէսզի ապահովենք վաղուան ճշմարիտ քրիստոնէան եւ վաւերական հայր:

Աստուած օրինէ ձեր նուիրական աշխատանքը եւ առաւել պտղաւորէ:

Մասնք սիրոյ ջերմ ողջոյնի եւ օրհնութեամբ,

Աղօթարար՝

[Handwritten signature in green ink]

ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՎԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ

Գանատայի Հայոց Թեմի





ՄՈՒՐԲ ՅԱԿՈՒԲ ԱՌԱՋ. ՄԱՅՐ Մ ԿԵՂԵՅԻ

Église Arménienne Sourp Hagop Armenian Church

Չորեքշաբթի, 8 Մայիս 2019

Մոնթրէալ

Սիրելի տնօրէնութիւն, ուսուցչական կազմ,
ծնողներ եւ աշակերտ-աշակերտուհիներ
Ս. Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեային,

Գիտէք, թէ այս տարին 150-ամեակն է Կոմիտասի ծննդեան: Այս հանճարին սակաւաթիւ բանաստեղծութիւններէն մէկուն վերնագիրն է՝ «Իբր Զարդ»:

Անոր տակ Կոմիտաս գրած է. «Օրէ օր // Ճրագ առ // Պահէ վառ՝ // Մտքիդ յար // Լուսատու: // Նորէն նոր // Կրակ տար // Անսպառ՝ // Սրտիդ լար // Յուսատու»:

Ինչ իմաստութիւն կը խտանայ այս պարզ խօսքերուն մէջ:

Ասիկա դաս է եւ ուղղութիւն բոլոր հասակաւորներուն:

Ասիկա դաս է եւ ուղղութիւն քեզի համար եւս, սիրելի աշակերտ-աշակերտուհի Կիրակնօրեայի: Դուն քու հոգեւոր դաստիարակութեանդ մէջ սորվեցար, թէ ճրագը՝ հաւատքի լոյսն է, եւ զայն վառ պահելու համար դուն պիտի նմանիս անոնց՝ որոնք իմաստուն էին, եւ իրենց ճրագներուն հետ, անոնց լոյսը միշտ վառ պահելու համար՝ աւելի իւր վերցուցին իրենց հետ, այսինքն՝ իրենց սրտերը պատրաստեցին որպէս պատշաճ տուն Աստուծոյ Հոգիին: Ասիկա մեր ներքին աշխարհը լուսաւոր կը պահէ, որպէսզի ճանչնանք «հոլը կենդանի»՝ Քրիստոսը: Ասիկա աղբիւրն է առ Աստուած նոր երգերու, որ նոր շունչ կու տան:

Սիրելի աշակերտ-աշակերտուհի, դուն ալ կոչուած ես վառ պահելու ճրագը, եւ կոչուած ես վկայ մը ըլլալու Աւետարանի կրակին: Ասիկա քեզ պիտի վերածէ օրինակի մը՝ որ յոյս կը ներշնչէ: Յոյսի օրինակներով է, որ Աստուծոյ արքայութիւնը պիտի գայ ու հաստատուի այստեղ՝ երկրի վրայ:

Բարեմաղթութեամբ՝

Հովի ԵՒ ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ

Ս. ՅԱԿՈՒԲ ԱՌԱՋԱՌՈՂԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅՈՅ

ՆԿԱՐՆԵՐ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2018-19 ՏԱՐԵՇՐՁԱՆԷՆ



Բողբոջ-Կոկոն-Ծաղիկ Դասարան



Նախակրթարան Ա. և Բ. դասարաններ



Նախակրթարան Գ. եւ Դ. դասարաններ



Նախակրթարան Ե. եւ Զ. դասարաններ




Նախապատրաստական և Երկրորդական Ա.



Երկրորդական Բ. և Դ. դասարաններ



Նախապատրաստական եւ Երկրորդական Ա.




Երկրորդական Բ. եւ Դ. դասարաններ



2018 - 19 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ



Խմբանկար՝ 5 Մայիս 2019-ին









ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ եւ ամբողջացնել մեր 39-րդ տարեշրջանը: Այս տարի նաեւ 26-րդ տարեդարձն էր մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ Սուրբ Յակոբի տօնին անցեալ օրը՝ Դեկտեմբեր 2018-ին՝ մեր կայքէջին՝ www.sourphagop.org-ին 18-րդ տարեդարձն էր:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքը, որ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն է, կը փսայ հիմը մեր եկեղեցւոյ պայծառութեան: Այն եկեղեցիները, որոնց մանուկները արգելքներ ունին Յիսուսին երթալու, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պետք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին. մանաւանդ Գանատայի մէջ՝ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, հայ կրօնական դաստիարակութեան սահմանափակումով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ հայ քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Ասկէ 89 տարիներ առաջ, Կիլիկիոյ Սահակ Բ. Խաչապետան Կաթողիկոս իր իմաստութեամբ, որպէս նշանաբան ունենալով Յիսուսի այս խօսքը, մէկ նախադասութեամբ կ'աղերսէր հայ մայրերուն որ իրենց զաւակները Քրիստոսի մօտեցնեն: Ան Քրիստոսի խօսքով կը սաստէր բոլոր անոնք որոնք տարբեր ձեւերով արգելք կը հանդիսանային որ հայ ազգին մանուկները մօտենան Քրիստոսի:

Այս տարուան ընթացքին, բաղդատած նախորդ տարուան, մեր արձանագրուող աշակերտներուն թիւը նուազեցաւ 54-էն 48-ի եւ սակայն, իւրաքանչիւր Կիրակի օրուան միջին ներկայութիւնը փսաց 32: Այս տարուան ընթացքին, ուրախ ենք յայտարարելու, թէ ունինք խոշորագոյն թիւով (12) Նախակրթարան Զ. դասարանի աւարտականներ, որոնք պիտի գան ուռճացնելու մեր երկրորդական աշակերտներու թիւը: Նաեւ ուրախ ենք որ մեր 10 ուսուցիչներէն 6-ը մեր դպրոցի աւարտականներն են:

Աստուծոյ կամքով՝ մեր 40-րդ տարեշրջանի վերամուտը, ինչպէս ամէն տարի, կը սկսինք Խաչվերացին՝ որ այս տարի Սեպտեմբեր 15, 2019-ին է: Մինչ այդ, բարի արձակուրդ կը մատթենք ձեզի:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական Կազմ

www.sourphagop.org

Մեր կայքէջը համացանցի վրայ իր գոյութեան 19-րդ տարին մտաւ 2018-ի Սուրբ Յակոբի օրը: Տարիներու ընթացքին նորոգեցինք մեր կայքէջին տեսքը ու ճոխացուցինք անոր բովանդակութիւնը: Մեր կայքէջին գրքերու բաժինն մէջ կը գտնէք.

- Ազգապատում (Ա. Բ. եւ Գ. հատորներ), Ժամագիրք, Սր. Պատարագ, Կրօնական Գիտելիքներ, Պատարագամատոյց եւ Քրիստոնէայ Հայաստան հատորները: Աւելցուցինք նաեւ երգերու եւ շարականներու բաժին մը ուր կը գտնուենք մեր Կիրակնօրեայ Դպրոցին մէջ ուսուցանուած երգերը:

Անշուշտ մեր կայքէջին վրայ նաեւ գտնուեցինք «Մաշտոցի Արձագանգ»ի բոլոր թիւերը:

Ինչպէս կը տեսնէք, մեր կայքէջին ենթաբաժանումներն են.

Մեր մասին, Լրահոս, Սուրբեր, Տօներ, Գիրքեր, Ժամանակացոյց, Մաշտոցի Արձագանգ, Կապեր, Events, Survey, Blog, Armenian Font, Gallery:

The screenshot shows the website's header with the logo of the 'Հայաստանեայց Եկեղեցայ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոց' (Armenian Holy Jacob Sunday School) and a background image of an open book. Below the header is a navigation menu with items like 'Տոհմ', 'Presentations', 'Մեր մասին', 'Մեր Դասապահերը', 'Լրահոս', 'Ս. Ծնունդ', 'Սուրբեր', 'Տօներ', 'Գիրքեր', 'Ժամանակացոյց', 'Մաշտոցի Արձագանգ', 'Կապեր', 'Events', 'Survey', 'Blog', 'News', 'Armenian Font', and 'Gallery'. The main content area features a news article titled '2018-19 տարեշրջան (39-րդ) Գործունեութիւն՝ ամէն Կիրակի՝ ժամը 10:30 ԷՆ 13:15'. The article text reads: 'Յիսուս ըստ՝ «Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»: Մարկոսի Աւետարան 10.14'. Below the text is a photograph of a group of people in a meeting, and the caption reads: 'Կիրակնօրեայ Դպրոցին Առօրեան (4՝ տեսերից) «Հայ Հորիզոն»-ի տեղեկատուութիւնը մեր Կիրակնօրեայ Դպրոցին մասին'.

ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

2018-19 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ եկեղեցւոյ հովանաւորութիւնը:

39-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2018-19 տարեշրջանը 39-րդ տարեշրջանն էր: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնը Խաչվերացի Կիրակին՝ 14 Սեպտեմբեր 1980-ին եւ յաջորդական 38-րդ տարեշրջանը բոլորեց այս տարի: Իւրաքանչիւր տարեշրջան կը սկսի Խաչվերացի Կիրակին եւ կը տեւէ մինչեւ Մայիսի 3-րդ Կիրակին: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի օրերը 10:30-13:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ մանկապարտէզի 3, նախակրթարանի 6 դասարաններ ինչպէս նաեւ երկրորդականի 4 դասարաններ, որոնք գործեցին 6 խմբաւորումներով:

26-ամեակ «Մաշտոցի Արձագանգ»-ին

Մեր 2018-19 տարեշրջանի ընթացքին նաեւ՝ 26-րդ տարին ըլլալով, հրատարակեցինք մեր պարբերաթերթ «Մաշտոցի Արձագանգ»ը ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»ը կը տպուի եւ PDF ձեւով կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ

http://www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ էջին վրայէն:

19-ամեակ www.sourphagop.org-ին

10 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ www.sourphagop.org-ը: Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները.

Մեր մասին, Սուրբեր, Տօներ, Գիրքեր (ուր կրնաք գտնել մեր դասագրքերը, Ազգապատումը իր 3 հատորներով, Բառարան, Եկեղեցական Բառարան, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարանը եւ Կրօնական Գիտելիքները), Ժամանակացոյց, «Մաշտոցի Արձագանգ» ի բոլոր թիւերը, Հայերէն տառատեսակ, Ճաշու Աւետարան, Տօներ, Պարբերաթերթ, Կապեր, Կարծիքդ, Խաղեր, Չարգացման Սրցում, Church Timeline, Daily Bible:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2018-19 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 47 էր, իսկ շաբաթական ներկայութիւնն էր 32 բաժնուած 6 խումբերու:

ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2018-19 տարեշրջանին ունեցանք 6 տարբեր բաժանումներ հետեւեալ ձեւով.

Խումբ

Բողոք, Կոկոն եւ Ծաղիկ
Նախակրթարան Ա. եւ Բ.
Նախակրթարան Գ. եւ Դ.
Նախակրթարան Ե. եւ Զ.
Երկր. Ա.

Երկրորդական Բ. եւ Դ.

Երգերու եւ շարականներու ուսուցում

«Մաշտոցի Արձագանգ»
Տնօրէն եւ Կայքէջի պատասխանատու

Դաստիարակ

Յասմիկ Նաճարեան,
Թալին Բարսեղեան
Թամար Գիզիրեան
Շողիկ Նաճարեան
Սեւակ Պապիկեան եւ
Սդեֆան Տեմիրճեան
Առէն Պապիկեան եւ
Մհեր Պանքեան
Վաչէ-Սազո Պոյաճեան՝
Ընկերակից Բազալ Տեմիրճեան
Թորոս Պապիկեան
Թորոս Պապիկեան

Կազմը գումարեց ժողովներ, որոնց ընթացքին արձարծուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներու վերաբերող եւ այլ նիւթեր:

ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱՆ

2018-19 տարեշրջանին Կիրակնօրեայ Դպրոցի առօրեան ընթացաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր դասաւանդուեցան Ս. Գրային, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին

Տէրունական աղօթքի, մաղթանքներու եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները բաժնուեցան 4 խումբերու.

- ա. Մանկապարտէզի Բողոք, Կոկոն եւ Ծաղիկ դասարանները
- բ. Նախակրթարանի Ա եւ Բ. դասարանները
- գ. Նախակրթարանի Գ., Դ., Ե. եւ Զ. դասարանները
- դ. Երկրորդական:

Պահերը ընթացան հետեւեալ ձեւով.



- Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսներու ուսուցում
- Բարոյակից պատմուածքներու ներկայացում
- Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում
- Ճաշու Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն
- «Մաշտոցի Արձագանգ»-ի սերտողութիւն:

Դասարանային բաժին


Դասաւանդուեցաւ ըստ դասագիրքերու:

ՉԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

16 Սեպտեմբեր 2018	Տարեկիզբ եւ վերամուտ
23 Սեպտեմբեր 2018	Վարժարանի աշակերտութիւնը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդութիւն ստացաւ
14 Հոկտեմբեր 2018	Թարգմանչաց տօնին յատուկ յայտագիր
23 Դեկտեմբեր 2018	Ամանորի եւ Սուրբ Ծննդեան զոյգ տօներու հանդիսութիւն, ուր տեղի ունեցաւ աշակերտներուն պատրաստած գեղարուեստական ելոյթը: Հանդիսութիւնը վերջ գտաւ հիւրասիրութեամբ եւ նուէրներու բաշխումով
3 Մարտ 2019	Վարդանանց եւ Բուն Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարութիւն
Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունեցաւ իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը.	
Ա. շաբաթ	Chips
Բ. շաբաթ	Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր
Գ. շաբաթ	Տուրմ
Դ. շաբաթ	Կազային խմիչքներ
Ե. շաբաթ	Շաքար
Զ. շաբաթ	Ծամոն
Է. շաբաթ	Հաւկիթ
14 Ապրիլ 2019	Դպրոցը փակ էր Ծաղկազարդի առիթով:
21 Ապրիլ 2019	Դպրոցը փակ էր Ս. Յարութեան տօնին առիթով:
19 Մայիս 2019	Ամալերջի Հանդէս

		Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոց							
		2018-19 տարեշրջան							
Սկիզբ	Վերջ	Բողոք-Կոկոն	Ծաղիկ	Նախ. Ա. Եւ Բ.	Նախ. Գ. Եւ Դ.	Նախ. Ե. Եւ Զ.	Երկր. Ա. Եւ Բ.	Երկր. Գ. Եւ Դ.	Երկր. Ե.
10:30	11:00	Հ Ա Ի Ա Ք							
11:00	11:08	Հայր Սեր, Մաղթանքներ, Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգ							
11:10	11:45	Լսարանային	Լսարանային	Երգ			Լսարանային	Օգնական	
11:47	12:22	Ձեռ./Երգ	Երգ			Լսարանային	Դաս.	Դաս.	Օգնական
12:25	13:00	Դաս.	Դաս.	Դաս.	Դաս.	Դաս.	Երգ/Դաս	Երգ/Դաս	Օգնական
13:02	13:10	Պահապան ամենայնի Քրիստոս - Մասն եւ բաժին եղիցի սուրբ պատարագիս							

Աշակերտական Ներկայութեան Տախտակներ



2018-19 տարեշրջանի իրաքանչիւր դասարանի արձանագրություն և միջին ներկայություն



2018-19 տարեշրջանի իրաքանչիւր Կիրակի օրուայ ներկայություն

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

ԻՉ. ՏԱՐԻ

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցին վրայ

www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ

Ջայաստանեայց Եկեղեցւոյ

Սուրբ Յակոբ

Կիրակնօրեայ Դպրոցի

2018-19 տարեշրջանի կազմը

Սդեֆան Տեմիրճեան

Մհեր Պանքեան

Սեւակ Պապիկեան

Բասգալ Տեմիրճեան

Առէն Պապիկեան

Թամար Գիզիրեան

Յասմիկ Նաճարեան

Շողիկ Նաճարեան

Թալին Բարսեղեան

Վաչէ-Սազո Պոյաճեան

Թորոս Պապիկեան